Խոսենք փաստերով, անօրինական գործողություններ դատավոր Արամ Հովսեփյանի կողմից

06.07.2012 00:00

Թիվ ԱՐԴ/0070/02/12 քաղաքացիական գործով 12.06.2012թ. նշանակված դատական նիստի ժամանակ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արամ Հովսեփյանը հայտնեց, որ հայցվորի կողմից դատարան է ներկայացվել հակընդդեմ հայցադիմումի պատասխան: Երբ ես ցանկացա տեղեկանալ թե ինչ կարգով է հակընդդեմ հայցադիմումի պատասխանը ներկայացվել դատարան, պարզվեց որ պատասխանը ստորագրված չէ և այն գործում է հայտնվել կասկածելի ճանապարհով: Հայտնեմ, որ հակընդդեմ հայցադիմումի պատասխանը դատարանի գրասենյակ չի հանձնվել, ոչ էլ այն դատարանին է հանձնվել դատական նիստի ժամանակ: Տեղեկանալով այդ մասին իմ կողմից դատավոր Արամ Հովսեփյանին հայտնվեց ինքնաբացարկ, որը գրավոր ներկայացնելու համար դատական նիստը հետաձգվեց և նշանակվեց 22.06.2012թ.: 22.06.2012թ. նշանակված դատական նիստի ժամանակ դատավոր Ա. Հովսեփյանը ինձ չթույլատրեց ներկայացնել ինքնաբացարկի միջնորդությունը պատճառաբանելով, որ ցանկանում է լսել դատարան հրավիրված վկաներին, որից հետո թույլ կտա ներկայացնել ինքնաբացարկի միջնորդությունը: Երբ իմ կողմից բողոքարկվեց դատավորի գործողությունները դատավոր Ա. Հովսեփյանը նշեց, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ որևէ նորմ, որի հիման վրա կողմը կարող է ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնել ցանկացած ժամանակ: Իմ կողմից կրկին նշվեց, որ դատավորի գործողություններն անօրինական են և չի բխում օրենքի պահանջներից, եթե դատարանը չթույլատրի ներկայացնել ինքնաբացարկի միջնորդությունը, ապա ստիպված եմ լքելու դատական նիստերի դահլիճը: Իմ հայտարարության կապակցությամբ դատավոր Ա. Հովսեփյանը հայտնեց, որ եթե ես լքեմ դատական նիստերի դահլիճը, ապա ինքը այն կդիտի դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունը ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան երեք օրով: ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է հարգել օրենքը և ենթարկվել օրենքին:Վերը նշված փաստերը խոսում են այն մասին, որ դատավոր Ա. Հովսեփյանը տեղյակ չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի մասին, կամ էլ չի հարգում օրենքը և չի ենթարկվում օրենքին:

Փաստաբան

Ղևոնդ Պապոյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })